

U 11  
2939

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սարգսյան Հրայրյա Մարատի

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը. 00. 01 «Տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական  
մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսական  
գիտությունների թեկանծովի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիրական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Մանասերյան Թաթուլ Նորայրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ  
Մայիլյան Ֆիրուզա Նորայրի  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Հովհաննիսյան Հասմիկ Վաղարշակի

Առաջադար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հուլիսի  
1-ին՝ ժամը 13:30 Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի  
տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. մայիսի 20-ին:

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տ.գ.թ., դոցենտ

*Ա. Հակոբջանյան* Ա. Հ. Հակոբջանյան

11-2939

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### Թեմայի արդիականությունը

Մարդկային կապիտալի տնտեսագիտական մեկնաբանումները բուռն  
քննարկումների առիթ են դարձել դեռևս անցյալ դարի կեսերից, երբ  
տեսաբաններն աշխատանքային ռեսուրսները սկսեցին մեկնաբանել  
կապիտալին բնորոշ հատկանիշների տեսանկյունից: Հետազոտություններում  
շեշտադրումներ էին կատարվում հատկապես մարդկային կապիտալի  
որակական կազմի, հատույցի և օգտագործման արդյունավետության, ինչպես  
նաև վերարտադրման հիմնախնդիրների շուրջ: Սակայն ժամանակը ցույց  
տվեց, որ ոչ պակաս կարևոր է մարդկային կապիտալի դիտարկումը  
տնտեսական անվտանգության և տնտեսական մրցունակության  
համատեքստում, քանի որ ակնհայտ դարձավ, որ մարդն է տնտեսության  
զարգացման առանցքային ռեսուրսը:

Այս առումով ներկայումս կարևորվում է մարդկային կապիտալի  
ծագումնաբանության և զարգացման շարժառիթների ուսումնասիրումն ինչպես  
միկրո-, այնպես էլ մակրոտնտեսական տեսանկյունից: Մարդկային կապիտալը  
մի կողմից տնտեսության շարժիչ ուժն է, մյուս կողմից հենց ինքը՝ մարդն է, որ  
ներկայանում է որպես տնտեսական գործունեության արդյունքների սպառող:  
Ուստի հիմնախնդիր է առաջանում դիտարկելու, թե որքանով է կուտակված  
մարդկային կապիտալի ներուժը նպաստում երկրի տնտեսական  
անվտանգության ապահովմանը և օժանդակում տնտեսական մրցունակության  
ամրապնդմանը:

Մարդկային կապիտալի գնահատման տեսամեթոդաբանական  
վերլուծությունները ցույց են տալիս, որ հիմնականում գնահատվում են  
կապիտալը բնութագրող առանձին բնութագրիչները և միջազգայնորեն  
ընդունված համաթվերով ներկայացվում են մարդկային կապիտալի  
վարկանիշային դիրքերը երկրների շարքում: Սակայն կարևորվում է նաև  
մարդկային կապիտալ - տնտեսական անվտանգություն - տնտեսական  
մրցունակություն եռակողմ փոխառնչությունը, որով հնարավորություն է  
ստեղծվում գործոնային վերլուծության ենթարկելու մարդկային կապիտալի  
ձևավորման ազդեցությունը անվտանգային և մրցակցային բաղադրիչների  
որակական բարելավումների վրա:

Ներկայումս արդիական է համարվում նաև ոչ միայն մարդկային  
կապիտալի պաշարի չափման մեթոդաբանության վերանայումը, այլև

մարդկային կապիտալի համարժեքության գնահատումը տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում: Եթե կուտակված մարդկային կապիտալը հետազոտողների կողմից հիմնականում դիտարկվում է ազգային հարստության տեսանկյունից, ապա ներկայումս կարևորվում է նաև կուտակված մարդկային կապիտալի համարժեքության գնահատումը երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության ապահովման համատեքստում:

Այս առումով արդիական է համարվում մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և մրցունակության ցուցանիշների փոխկապակցումը, որով բացահայտվում է մարդկային կապիտալի որակական և քանակական փոփոխությունների ներազդեցությունը երկրի անվտանգային և մրցակցային բաղադրիչների վրա: Դրանով իսկ հնարավորություններ են ստեղծվում՝ գնահատելու մարդկային կապիտալի բավարար սահմանները երկրի անվտանգային և մրցակցային անհրաժեշտ մակարդակներն ապահովելիս:

Ֆիզիկական կամ ֆինանսական կապիտալի համեմատ մարդկային կապիտալի հատուցի բնորոշումը այնուհանդերձ տարբերվում է ավանդական մոտեցումներից: Այս պարագայում, կապիտալի ավանսավորման, փոխակերպման, շարժունության, վերարտադրման և ինքնաճման հատկություններից բացի, անհրաժեշտ է նաև դիտարկել մարդկային կապիտալում գեներացված օգտակարության ներուժը: Եվ եթե գեներացված օգտակար այդ ներուժը արագությամբ վերափոխվում և իր կիրառությունն է գտնում տնտեսական համակարգում, ապա արձանագրվում է մարդկային կապիտալի արդյունարար ներազդեցություն երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության ամրապնդման վրա: Հետևաբար, ներկայումս կարևորվում է երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում մարդկային կապիտալի օգտակարության ներուժը գնահատելը, որով ռազմավարական որոշումներ են կայացվում երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումների ուղղությամբ:

Հարկ է նշել, որ մարդկային կապիտալի գնահատման տեսամթոթաբանական ուղղությունները, դրանց քննարկումները և լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել ինչպես օտարերկրյա տեսաբանների, այնպես էլ հայազգի հետազոտողների աշխատություններում: Սակայն մարդկային կապիտալի գնահատման հիմնախնդիրները տնտեսական անվտանգության և տնտեսական մրցունակության համատեքստում դեռևս իրենց խորքային

լուծումները չեն գտել կատարված հետազոտություններում, որն էլ կանխորոշել է ատենախոսության թեմատիկ ուղղվածությունը և կատարված հետազոտության արդիականությունը, նաև խնդրի առարկայի հրատապությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է մշակել և ներկայացնել ՀՀ-ում մարդկային կապիտալի գնահատման մեթոդաբանություն՝ ելնելով երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության նպատակադրումներից:

Ըստ հետազոտության նպատակի՝ ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ելնելով մարդկային կապիտալի վերարտադրման և հատուցի առանձնահատկություններից՝ քննադատել տնտեսական անվտանգության, մրցունակության և մարդկային կապիտալի եռակողմ գործոնային փոխառնչության շրջանակը,
- մարդկային կապիտալի փոփոխման վարքագծային վերլուծությունների հիման վրա առաջարկել մարդկային կապիտալի պաշարի չափման և գնահատման մեթոդաբանություն,
- մարդկային կապիտալի գնահատման տեսամեթոդաբանական մեկնաբանումների արդյունքում ներկայացնել կուտակված մարդկային կապիտալի չափման նոր մոտեցումներ,
- համադրելով մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման արդյունավետությունը՝ տնտեսության անվտանգության և մրցունակության համատեքստում մշակել համաթիվ ու դրանով իսկ մարդկային կապիտալի որակական փոփոխությունների արդյունքները փոխկապակցել երկրի անվտանգային, մրցակցային և կայուն զարգացման միտումներին,
- մշակել մարդկային կապիտալի կուտակման համարժեքության գնահատման մեթոդաբանություն, որով հնարավորություն կստեղծվի՝ կանխարգելելու մարդկային կապիտալի որակական քննադրիչների անկման ռիսկերը երկրի տնտեսական անվտանգային և մրցունակության հավասարակշռության խախտման տեսանկյունից:
- առաջարկել մարդկային կապիտալի օգտակարության ներուժի գնահատման մեթոդաբանություն, որն էլ հնարավորություն կտա՝ հստակեցնելու մարդկային կապիտալի անհրաժեշտ ու բավարար սահմանները և երկրի տնտեսական անվտանգային ու մրցակցային

համատեքստում իրականացնելու մարդկային կապիտալի օգտագործման հատույցի գնահատումները:

**Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:**

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել մարդկային կապիտալի կուտակման և օգտագործման շրջանակը՝ իրեն հատուկ գործառույթների ոլորտներով:

Հետազոտության առարկան երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում մարդկային կապիտալի կուտակման և օգտագործման գնահատման հիմնախնդիրներն են:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:**

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, մակրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են մարդկային կապիտալի և մարդկային զարգացմանը վերաբերող միջազգային հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրվող բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական վերացարկման, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ապահովագրավճարների և դրանց վերաբաշխումների գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

**Հետազոտության գիտական նորույթը**

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ-ում գործող մարդկային կապիտալի կուտակման և օգտագործման գնահատման մեթոդաբանության առաջարկությունն է տնտեսական անվտանգության ու մրցունակության համատեքստում: Մասնավորապես.

- առաջարկվել է մարդկային կապիտալի պաշարի չափման և գնահատման մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս՝ տնտեսական անվտանգային և մրցակցային նպատակադրումների հասանելիության հենքով մեկնաբանելու կապիտալի կուտակման

նպատակահարմարության արժեքումը տնտեսական աստիճանակարգի յուրաքանչյուր մակարդակում,

- մշակվել է տնտեսական կայունության պաշարի համաթիվ՝ համադրելով մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման արդյունավետությունը տնտեսության անվտանգության ու մրցունակության համատեքստում, դրանով իսկ փոխկապակցելով մարդկային կապիտալի որակական փոփոխությունների արդյունքները երկրի անվտանգային, մրցակցային, ինչպես նաև կայուն զարգացման միտումներին,
- տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում հաշվեկշռման սկզբունքով առաջարկվել է մարդկային կապիտալի կուտակման համարժեքության գնահատման մեթոդաբանություն, որով հնարավորություն է ստեղծվում՝ կանխարգելելու մարդկային կապիտալի որակական բնութագրիչների անկման ռիսկերը երկրի տնտեսական անվտանգային և մրցունակության հավասարակշռության խախտման տեսանկյունից:
- ներկայացվել է մարդկային կապիտալի օգտակարության ներուժի գնահատման մեթոդաբանություն, որով որոշվում են մարդկային կապիտալի անհրաժեշտ և բավարար սահմանները երկրի անվտանգային ու մրցակցային անհրաժեշտ մակադակներն ապահովելիս, և իրականացվում են մարդկային կապիտալի օգտագործման հատույցի գնահատումներ տնտեսական անվտանգային և մրցակցային համատեքստում:

**Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:**

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում մարդկային կապիտալի գնահատման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ոլորտի բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ-ում վարվող տնտեսական անվտանգության և մրցունակության քաղաքականության մեջ՝ նպաստելով

մարդկային կապիտալի ձևավորման որակական բաղադրիչների բարելավմանը և կապիտալի տնտեսական օգտակարության ներուժի ընդլայնմանը:

**Հեթազորության փորձարկումը և հրապարակումները:**

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ամբիոնների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության Հյուսիսային համալսարանի «Մրցունակ կրթության և գիտության մարտահրավերները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողովում (2021 թ.): Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 4 հրատարակումներում:

**Արենախոսության կառուցվածքը և ծավալը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների և առաջարկությունների բաժիններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքում ներառված են 23 գծապատկեր և 19 աղյուսակ: Նյութը շարադրված է 119, օգտագործված գրականության ցանկը՝ 9, իսկ հավելվածը՝ 2 էջերում:


**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորոպը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Հետազոտության առաջին՝ «**Մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և մրցունակության տեսամեթոդական հիմքերը**», գլխում քննարկվում են մարդկային կապիտալի տնտեսագիտական բնութագրումները և դրսևորման առանձնահատկությունները: Ցանկացած համակարգ, իր կայուն գործունեության և անխափան զարգացման համար պահանջում է անվտանգային երաշխիքներ: Բացառություն չէ նաև տնտեսական համակարգը, որի առանցքում կանգնած է մարդը՝ իր կենսապահովման պահանջունքներով և զարգացման հավակնություններով: Մարդկային կապիտալը՝ իր կուտակման և օգտագործման դրսևորումներով, տնտեսական անվտանգության ապահովման առնչությամբ բազմաբնույթ արդյունքներ է երաշխավորում, ուստի անհրաժեշտություն է առաջանում վերլուծելու անվտանգային խնդիրների և մարդկային կապիտալի փոխառնչության շրջանակը:

Կարողանալով գեներացնել արդյունավետ մարդկային կապիտալ՝ պետություններին հաջողվում է արագ արձագանքել միջազգային շուկաների դինամիկ փոփոխություններին, գեներացնել նորամուծական մեգաձրագրեր, կազմակերպել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ, ներդնել գիտելիքահենք արտադրություններ, որոնցով ապահովվում է մրցակիցներին առաջանցիկությունը միջազգային շուկաներում: Հետևաբար, որակյալ մարդկային կապիտալի ձևավորումն ու օգտագործումը իր հերթին ազգային մրցակցային առավելություններ է ձևավորում միջազգային շուկայում:<sup>1</sup>

<sup>1</sup> Судова Т. Л., Государственные инвестиции в человеческий капитал, // Петербургский экономический журнал, 2017, № 1, стр 39–49.



Գծապատկեր 1. Մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և մրցունակության եռակողմ փոխառնչությունը:<sup>2</sup>

Այսպիսով, տնտեսության համակարգի աստիճանակարգային կտրվածքով մրցունակությունը դիտարկելիս կարող ենք արձանագրել, որ այստեղ նույնպես մարդկային կապիտալն առանցքային դիրք է զբաղում: Ավելին, մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և մրցունակության միջև դիտվում է ուղղակի կապ, և մեկի փոփոխությունն իր անմիջական ազդեցությունն է ունենում այս եռակողմ փոխկապվածության վրա (տե՛ս գծապատկեր 1): Այս առումով, անհարժեշտություն է առաջանում.

- բացահայտել մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և մրցունակության փոխազդեցության կապերը,
- սահմանել այն գործոնները, որոնք դերակատարում ունեն մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և մրցունակության փոխկապվածության ներդաշնակության ապահովման վրա,
- վերլուծել «մարդկային կապիտալ - տնտեսական անվտանգություն - մրցունակություն» շղթան՝ գործոնային փոխներազդեցության տեսանկյունից,
- գնահատել մարդկային կապիտալի կուտակման և օգտագործման արդյունավետությունը տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում:

<sup>2</sup> Կազմել է ատենախոսը:

«Ետազոտության երկրորդ՝ «Մարդկային կապիտալի գնահատման և իրացման գործոնային հիմնախնդիրները», գլխում ներկայացվում է մարդկային կապիտալի փոփոխման վարքագծային վերլուծությունը տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում: Համաձայն համշխարհային բանկի զեկույցի՝ Հայաստանում ծնված 100 երեխայից 91-ը առողջ է և մինչև հինգ տարեկանն ապրում է, որը բավական ազդեցիկ է մարդկային կապիտալի համաթվի բարելավման առումով: Ոչ պակաս կարևոր է այն գնահատականը՝ համաձայն որի Հայաստանում 4 տարեկանից կրթությունը սկսող երեխայի գծով մինչև 18 տարին լրանալը կարելի է ակնկալել, որ նա ավարտած կլինի ուսման 11 տարին: Համաձայն վերոնշյալ զեկույցի՝ Հայաստանի աշակերտները 443 միավոր են ստանում՝ ըստ սանդղակի, որտեղ 625-ը ներկայացնում է բարձր առաջադիմությունը և 300 միավորը՝ նվազագույնը: Սակայն իրականում երեխաների կրթական արդյունքները որպես գործոն ներառելու դեպքում ուսման սպասվող տարիները կազմում են ընդամենը 7.9 տարի: Ընդ որում, ըստ մարդկային կապիտալի գնահատման փորձագիտական գնահատումների, որն արվել է չափահասների ապրելիության ցուցանիշի գծով՝ Հայաստանի 15 տարեկանների 88 տոկոսը կապրի մինչև 60 տարին (տե՛ս աղյուսակ 1):<sup>3</sup> Ընդ որում, ՀՀ-ում մարդկային կապիտալի բաղադրիչներն ըստ սեռերի գրեթե համարժեք արդյունքներով են ներկայացվում:

Աղյուսակ 1

ՀՀ-ում մարդկային կապիտալի համաթվի բաղադրիչները ըստ սեռերի<sup>4</sup>

Բաղադրիչ	Տղաներ	Աղջիկներ	Ընդհանուր
Մարդկային կապիտալի համաթիվ	0.56	0.59	0.58
Կյանքի տևողությունը՝ մինչև 5 տարեկան	0.99	0.99	0.99
Ուսման սպասվող տարիներ	10.9	11.3	11.1
Ներդաշնակեցված թեստերի միավորներ	439	448	443
Չափահասների կյանքի տևողություն	0.83	0.93	0.88
Ոչ թերաճի ցուցանիշներ	0.89	0.92	0.91

<sup>3</sup> Մարդկային կապիտալի համաթիվը և դրա բաղադրիչները, Հայաստան, // [www.thedocs.worldbank.org/NCArmenia2pagerARM.pdf](http://www.thedocs.worldbank.org/NCArmenia2pagerARM.pdf)


<sup>4</sup> The human capital index 2020 update, //World Bank Group Report, 2020, September 16.

Այսպիսով, Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող մարդկային կապիտալի համաթիվը տնտեսական անվտանգության և տնտեսական մրցունակության տեսանկյունից էական տեղեկատվություն չի տրամադրում, ուստի առաջարկվում է զուգահեռաբար կիրառել նաև այնպիսի ցուցանիշ, որը կլրացներ միջազգայնորեն օգտագործվող համաթիվը և առավել հասցեական փոխկապվածություն կունենար անվտանգությանն ու մրցունակության կատեգորիաների հետ:

Հետազոտության երրորդ՝ «Մարդկային կապիտալի իրացման հեռանկարները տնտեսական մրցունակության բարձրացման և տնտեսական անվտանգության ապահովման համատեքստում», գլխում քննարկվում են մարդկային կապիտալի օգտակար ներուժի գնահատման և իրացման հեռանկարները ՀՀ-ում: Այս առումով, մեր կողմից տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում առաջարկվում է մարդկային կապիտալի օգտակար ներուժի գնահատումը ներկայացնել երկու հիմնական բաղադրիչներով՝ կապիտալի կուտակման և օգտագործման գնահատումներով (տե՛ս գծապատկեր 2):

Մարդկային կապիտալի օգտակար ներուժ = կապիտալի կուտակումից ակնկալվող արդյունքներ + կապիտալի օգտագործումից ակնկալվող արդյունքներ:

Ստացվում է այնպես, որ մարդկային կապիտալի օգտակար ներուժն իր մեջ գեներացնում է այն հնարավորությունները, որոնցով ձեռք են բերվում երկրի տնտեսական անվտանգության և տնտեսական մրցունակության ամրապնդման երաշխիքներ: Եվ ամենևին էլ պարտադիր չէ, որ մարդկային կապիտալի ներուժն իր արդյունքներով դրսևորվի ժամանակի կոնկրետ պահին: Այն կարող է ունենալ ոչ միայն մարտավարական, այլ ուղղակի նշանակություն՝ միտված լինելով երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության մակարդակների բարելավմանը տեսանելի ապագայում:



Գծապատկեր 2. Մարդկային կապիտալի օգտակարության ներուժը տնտեսական անվտանգության և մրցունակության շրջանակում:<sup>5</sup>

<sup>5</sup> Կազմել է ատենախոսը:

**Եզրակացությունների և առաջարկությունների** բաժիններում ամփոփվել են հետազոտության կարևորագույն արդյունքները և կատարվել են առաջարկություններ, որոնցից հիմնականներն են.

1. Տնտեսական մրցունակության և անվտանգության համատեքստում մարդկային կապիտալի փոփոխման վարքագծային վերլուծությունը ցույց է տալիս մարդկային կապիտալի կուտակման ներդաշնակության կարևորությունը՝ համահունչ տնտեսական անվտանգության և մրցունակության ապահովման պահանջներին, երբ մեղմվում են կապիտալի փոշիացման ռիսկերը, և բարձրանում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Բացի այդ, մարդկային կապիտալում կատարվող ներդրումների ռեսուրսահատույցի գնահատումներին զուգահեռ՝ կարևորվում է նաև կապիտալի կուտակման արդյունավետության գնահատումը՝ էական տեղ հատկացնելով մարդկային կապիտալի հատույցի նկատմամբ տնտեսական անվտանգության և մրցունակության հավելաճի առաջանցիկությանը:

Առաջնային է համարվում նաև մարդկային կապիտալի կուտակման վարքագծային փոփոխության ազդեցության գնահատման անհրաժեշտությունը տնտեսական անվտանգության և մրցունակության ամրապնդման համատեքստում՝ գնահատելով մարդկային կապիտալի ազդեցությունը տնտեսական անվտանգային և մրցակցային բաղադրիչների որակական բարելավումների վրա:

2. Մարդկային կապիտալի պաշարի չափման և գնահատման համար առաջարկվել է մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս:

**Առաջին.** ձևավորել համադրելի դաշտ մարդկային կապիտալը ներկայացնող առանձին բաղադրիչների համար՝ գործակիցների համախմբման միջոցով կատարելով մարդկային կապիտալի համապարփակ արժևորում: Գործակիցների կիրառումը հնարավորություն է տալիս ստանալու [0-1] միջակայքով ցուցիչներ և հեշտացնում է տարասեռ ցուցանիշների համադրումը և ներառումը մարդկային պաշարի ընդհանրական համաթիվում: Ընդ որում, որքան նպատակադրումների հասանելիության հենքով մարդկային կապիտալի պաշարի զծով հաշվարկված համընդհանուր համաթիվը մոտենում է 1,0-ին, այնքան մեծանում է կապիտալի արժևորումը:

**Երկրորդ.** կիրառել մարդկային կապիտալը արժևորող բաղադրիչների լայն շրջանակ տնտեսական աստիճանակարգի բոլոր հարթություններում: Այս պարագայում մարդկային կապիտալի գնահատումը դառնում է առավել

հիմնավոր այն առումով, որ այն հաշվի է առնում ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, մշակութային, բարոյահոգաբանական, առողջ ապրելակերպի նորմերը, որոնց փաստացի իրացումը հասարակության կողմից 0-1,0 սանդղակով գործակիցներով է չափվում՝ ձևավորելով համեմատական վերլուծության ու համադրելիության դաշտ:

**Երրորդ.** նպատակադրումների հասանելիության հենքով մարդկային կապիտալի պաշարի արժևորումը տնտեսական աստիճանակարգի յուրաքանչյուր մակարդակում հնարավորություն է ստեղծում՝ վերլուծելու, թե կոնկրետ որ մակարդակում են առավել արդարացվում կապիտալի օգտագործումից հասարակության սպասումները:

3. Առաջարկվել է տնտեսական կայունության պաշարի համաթիվ, որը համադրում է մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման արդյունավետությունը տնտեսության անվտանգության և մրցունակության համատեքստում: Ընդ որում, տնտեսական կայունության պաշարի համաթիվի ձևավորումը առաջարկվում է իրականացնել մարդկային կապիտալի պաշար, տնտեսական անվտանգության պաշար, տնտեսական մրցունակության մակարդակի պաշար համաթիվերի համակցմամբ, որը նախ և առաջ կարևորվում է հենց այն հանգամանքով, որ մարդկային կապիտալի որակական փոփոխությունների արդյունքները ուղակիորեն փոխկապակցվում են երկրի անվտանգային, մրցակցային և կայուն զարգացման միտումների հետ: Մարդկային կապիտալը դիտարկվում է ոչ միայն ազգային հարստության ընդլայնման, այլև երկրի տնտեսական կայունության պաշարների բացահայտման տեսանկյունից:

4. Առաջարկվել է տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում մարդկային կապիտալի կուտակման համարժեքության գնահատման մեթոդաբանություն՝ հիմնված հաշվեկշռման սկզբունքի վրա: Այս դեպքում անվտանգային և մրցակցային գործոնները փոխազդեցության մեջ են դիտարկվում մարդկային կապիտալի հետ: Եվ եթե խախտվում է մարդկային կապիտալի համարժեքությունը, այսինքն անհրաժեշտ և բավարար կուտակման մակարդակը, ապա այն տնտեսական անվտանգային և մրցակցային մակարդակների անկման ռիսկերի ձևավորման ազդակներ է հաղորդում:

Հետևաբար, մարդկային կապիտալի կուտակման համարժեքության գնահատումը տնտեսական անվտանգության և մրցունակության

համատեքստում առաջարկվում է դիտարկել երկրի տնտեսական կայունության անհրաժեշտ պաշարի ապահովման տեսանկյունից: Այս առումով կարևորվում է մարդկային կապիտալի, տնտեսական անվտանգության և տնտեսական մրցունակության պաշարների համաթվերի որոշումը և դրանց փոխկապակցմամբ տնտեսական կայունության համաթվի ձևավորումը, որով հնարավորություն է ստեղծվում վերջինիս վրա մարդկային կապիտալի կուտակման ազդեցության չափաբաժնի ներգործության գնահատման համար:

5. Առաջարկվել է կիրառել մարդկային կապիտալի օգտակարության ներուժի գնահատում, որը թույլ կտա մի կողմից որոշել մարդկային կապիտալի բավարար սահմանները երկրի անվտանգային և մրցակցային անհրաժեշտ մակարդակներն ապահովելիս և քայլեր ձեռնարկել երկրի ներսում կուտակված կապիտալի փոշիացման ռիսկերի կանխարգելման ուղղություններով: Մյուս կողմից այն թույլ կտա իրականացնել մարդկային կապիտալի օգտագործման հատույցի գնահատումներ երկրի տնտեսական անվտանգային և մրցակցային ոլորտներում և դրանով իսկ հնարավորություններ ստեղծել տնտեսության տարբեր հատվածներում մարդկային ռեսուրսների առավելագույն բաշխումների ուղղությամբ:

6. Առաջարկվել է նաև կազմակերպել մարդկային կապիտալի որակական բնութագրիչների մշտադիտարկում երկրի տնտեսական անվտանգության և մրցունակության ամրապնդման տեսանկյունից այնպես, որ բացահայտվեն մարդկային կապիտալի արդյունավետ վերարտադրման և օգտագործման ուղիները՝ ի նպաստ երկրի կայուն զարգացման հավակնոտ ծրագրերի իրականացման:

### Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում:

1. Khachatryan N., Sargsyan H., National Value system impact on the economy of Armenia //Wisdom, Vol.14, #1, 2020, pp. 105-111.
2. Սարգսյան Հ., Մարդկային կապիտալի գնահատման մեթոդաբանական հիմնախնդիրները, //Այլընտրանք գիտական հանդես, #3, 2021 թ., էջ 199-211:
3. Sargsyan H., Human capital adequacy in the contents of economic security and competitiveness, //Finance and accounting scientific journal 2 (8), 2021, pp. 133-139.

## HUMAN CAPITAL IN THE CONTEXT OF ECONOMIC SECURITY AND ECONOMIC COMPETITIVENESS

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.01 "The theory of economic science and the history of economic thought"

The defense of the dissertation will take place at 13:30, on July 1<sup>st</sup>, 2022, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 0009, Yerevan, 52 Abovyan st.

### ABSTRACT

The main aim of the research is to develop and to present a methodology for assessing human capital in the Republic of Armenia based on the goals of the country's economic safekeeping and competitiveness.

According to the purpose of the research, the following objectives were proposed in the dissertation:

- describe the scope of economic security, competitiveness country, based on the specifics of the compensation for the reproduction of human capital;
- propose a methodology for measuring human capital stock based on behavioral analysis of human capital change.
- develop a methodology for assessing the adequacy of the accumulation of human capital, which will enable the risk of a decline in the qualitative characteristics of human capital from the point of view of disrupting the balance of economic security and competitiveness of the country.
- propose a methodology for assessing the potential for utilization of human capital, which will enable to clarify the necessary and sufficient limits of human capital.

As a result of the research and the scientific novelty is the presentation the methodology of human capital operating in the Republic of Armenia in the context of economic security and competitiveness. In particular:

- a human resource measurement assessment methodology has been proposed, which makes it possible to interpret the assessment of the expediency of capital accumulation at each level of the economic hierarchy on the basis of access to economic security and competitive goals.
- An index of economic stability has been developed, comparing the efficiency of human capital formation and use in the context of economic security and competitiveness, thus correlating the results of qualitative changes in human capital with the country's security, competitive, as well as sustainable development trends.
- in the context of economic security and competitiveness, the methodology for assessing the adequacy of the accumulation of human capital has been proposed on the principle of equilibrium, which makes it possible to prevent the risks of declining qualitative characteristics of human capital from the point of view of economic imbalance and competitiveness.
- a methodology for assessing the potential for utilization of human capital is presented, which determines the necessary and sufficient limits of human capital to ensure the necessary security and competitive levels of the country.

In addition, certain recommendations are worked out related to the development of a methodology for assessing human capital in the Republic of Armenia based on the goals of the country's economic safekeeping and competitiveness.

Грачя Маратович Саргсян

## ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ В КОНТЕКСТЕ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ И ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 – “Теория экономической науки и история экономической мысли”

Защита диссертации состоится 1-го июля 2022г. в 13:30, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул.Х.Абовяна 52

### РЕЗЮМЕ

Целью исследования является разработка и представление методики оценки человеческого капитала исходя из экономической безопасности, конкурентоспособности страны.

В соответствии с целью исследования в диссертации были предложены следующие задачи

- Описать сферу экономической безопасности и конкурентоспособности страны, исходя из специфики воспроизводства человеческого капитала;
- Предложить методологию измерения запаса человеческого капитала на основе поведенческого анализа изменения человеческого капитала.
- сравнивая эффективность формирования и использования человеческого капитала в контексте экономической безопасности и конкуренции, разработать показатель и таким образом соотнести результаты качественных изменений человеческого капитала с безопасностью страны, конкурентоспособностью и тенденциями устойчивого развития
- разработать методику оценки достаточности накопления человеческого капитала, которая позволит предотвратить риск снижения качественных характеристик человеческого капитала с точки зрения нарушения баланса экономической безопасности и конкурентоспособности страны.
- предложить методику оценки потенциала использования человеческого капитала, которая позволит уточнить необходимые, достаточные пределы человеческого капитала.

Научная новизна исследования заключается в предложении методики оценки использования в Республике Армения человеческого капитала в контексте экономической безопасности и конкурентоспособности. В частности.

- предложена методика измерения оценки человеческих ресурсов, позволяющая интерпретировать оценку целесообразности накопления капитала на каждом уровне экономической иерархии на основе доступа к экономической безопасности и конкурентных целей.
- Разработан индекс экономической стабильности, сравнивающий эффективность формирования и использования человеческого капитала в контексте экономической безопасности и конкурентоспособности, тем самым соотнося результаты качественных изменений человеческого капитала с безопасностью, конкурентоспособностью, а также устойчивым развитием страны. тенденции.
- в контексте экономической безопасности конкурентоспособности предложена равновесная методика оценки достаточности накопления человеческого капитала, позволяющая предотвратить риски снижения качественных характеристик человеческого капитала с точки экономической диспропорции и конкурентоспособности.
- представлена методика оценки потенциала использования человеческого капитала, определяющая необходимые и достаточные пределы человеческого капитала для обеспечения необходимого уровня безопасности и конкурентоспособности страны.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and includes some faint markings that appear to be a signature or initials.



